


ମୁଖ୍ୟମନ୍ତ୍ରୀ



## ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄԵՏԱՂՅԱ ՍՊԱԾՔ

### Հ. Գ. ԱԼԵՏԻՄՅԱՆ

Ուրարտական հուշարձանների պեղումների, պատահական գյուտերի չնորհիվ հայտնաբերվել են տարբեր տիպերի բազմաթիվ մետաղյա անոթներ, որոնք իրենց նշանակությամբ պատկանում են խոհանոցային-սեղանի և պաշտամունքային սպասքին: Հատկապես աչքի են ընկնում խոշոր և միջին չափի կաթսաները, դույլերը, սափորները, թասերը, որոնք հայտնաբերվել են ուրարտական բնակավայրերից և դամբարաններից:

Կաթսաներ -իրենց կիրառական նշանակությամբ բաժանվում են մի քանի խմբերի և առանձին տիպերի:

Առաջին խմբին է պատկանում կարմիր բլուրից գտնված մրապատպղնձե կաթսան: Այն կլորագուն է (տրամագիծը 55 սմ, բարձրությունը 60 սմ), իսկ փոքր ինչ ճկված շուրթը ամրության համար փաթաթված է երկաթե ծողի վրա: Նման կաթսայի բեկորներ հայտնի է իգդիրի դամբարանագաշտից: Արգիշտիխինիլիից գտնված փոքրիկ կաթսան ունի սափորաձև իրան և ցածր ուղղիղ վիզ: Շրթի եզրին ամրացված են անցքեր ունեցող թիթեղներ, որոնց միջով անցնում է լարից պատրաստված բռնակը:

Երկրորդ խմբին են վերաբերում պաշտամունքային կաթսաները, որոնք բաժանվում են մի քանի տիպի:

Առաջին տիպն են ներկայացնում Սարգոն 2-րդի բարձրաքանդակների վրա պատկերված Մուսասիրի տաճարի առջև կանգնած երկու հսկայական կաթսաները: Դրանք ունեն կարասաձև, դեպի վեր լայնացող իրաններ և կլորագուն շուրթեր: Երկու կաթսաներն էլ կայունությունը պահպանելու համար տեղադրված են եռոտանի հենակների վրա, որոնց ստորին մասերը քանդակված են ցլի կճղակի ձևով: Նման կաթսայի օգտագործման մասին հիշատակում է նույն Սարգոն 2-րդը: Դրանք լցվում էին հեղման գինով ուրարտական թագավորների և քրմերի կողմից Խալդի աստծո առջև զոհաբերություններ կատարելու ժամանակ<sup>1</sup>:

Անկասկած, նման նշանակություն ունի նաև կարմիր բլուրում գտնված հսկա (տարողությունը մոտ 1500 լիտր) կաթսան: Այն պատրաստված է բարակ բրոնզե թիթեղից: Վերին եզրին շրջանակը և ուղղահայաց ամրացված երկու բռնակները պատրաստված են հաստ բրոնզե միաձույլ ձողից: Մուսասիրի և Կարմիր բլուրի կաթսաները, բնականաբար, չեին կարող խոհանոցային նպատակների համար ծառայել: Բացի Սարգոն 2-րդի հիշատակումից, պարզ, որ դրանց մեջ հնարավոր չէր որևէ բան եփել, քանի

<sup>1</sup> Բ. Բ. Պիոտրովսկի, Վանսկո ցարство, Մոսկվա, 1959, տաբ. VII.

որ նրանց բարակ հատակները արագ կայրվեին: Նման կաթսաները ունեցել են պաշտամունքային նշանակություն, որոնց մեջ լցված հեղուկ գինին օգտագործվել է ծիսական արարողությունների ժամանակ:

Երրորդ տիպին են վերաբերում բրոնզե թիթեղից պատրաստված խոչըր, կլորավուն իրանով, փոքրիկ դուրս ճկված շուրթով կաթսաները, որոնց ուսերը զարդարված են երեքական կամ չորսական ցլագլուխ քանդակներով: Այս գլխիկները ձուլված են մոմե կաղապարներով և բոլորն էլ ունեն համանման ոճական առանձնահատկություններ՝ խոշոր եղջյուրներ, կլոր կամ ձվածե աչքեր, ծանր հոնքեր: Խոշոր մոռութների վրա ընդգծված են հաստ սեղմված շուրթերը և կլոր քթանցքները: Ցլերի ճակատները զարդարված են եղևնածե նախշով: Այդպիսի կաթսա հայտնի է Ալթին թեփեից (բարձրությունը 51 սմ, շուրթի տրամագիծը 72 սմ): Ուսերը զարդարված են ցուլերի չորս գլխիկներով, որոնք ամրացված են թևերը բացված, թուչունի ձև ունեցող թիթեղների միջոցով: Այս կաթսան տեղադրված էր բրոնզե հաստ ձողերից կազմված եռոտանու վրա, որի ոտքերի ծայրերը ավարտվում են ցուլերի կճղակ-զարդաքանդակով:

Արևմտյան Հայաստանից գտնված մեկ այլ նման կաթսա պահպում է Մյունխենի թանգարանում: Կաթսան ավելի փոքր է (բարձրությունը 48 սմ, շուրթի տրամագիծը 46 սմ), իսկ ուսերը ոչ թե չորս, այլ երեք ցուլերի գլուխներով են զարդարված: Այն նույնականացնած է եռոտանու վրա: Երրորդ ավելի փոքր կաթսան (բարձրությունը 27 սմ, տրամագիծը 30 սմ) գտնվել է առանց եռոտանու: Անոթի ուսերը զարդարված են տրամագծորեն հակառակ եզրերին տեղադրված երկու ցուլերի գլխաքանդակներով:

Բացի կաթսաներից, նման բրոնզե ցուլերի գլուխներ մեծ թվով հայտնի են Վանից, Ալիշարի դամբարանից, Ղուչչիից (Ուրմիա լճի մոտ) և Արևմտյան Հայաստանից այլ հուշարձաններից: Դրանք պահպում են Լոնդոնի, Լուվրի, Շվեյցարիայի, Մյունխենի, Քլիվլենդի, Հարվարդի, Ցինցինատի և այլ թանգարաններում:

Երրորդ տիպին են վերաբերում այն բրոնզե կաթսաները, որոնց ուսերը զարդարում են թևերը փուած թուչունների ֆիգուրները: Դրանց կենտրոնը զարդարում է կանացի մարմնի պատկերը: Վերջիններս ունեն գեղեցիկ կլորավուն դեմքեր, մինչև ուսերը հասնող շքեղ մագեր, ուղիղ քթեր, նշանաւութեան և լիքը շուրթերով փակած բերաններ: Բ. Պիոտրովսկին համարում է, որ այս կանացի մարմին ունեցող թուչունները կապված են արևի պաշտամունքի հետ և խորհրդանշում են արևի աստծո կնոջը՝ Տուշպուեային<sup>2</sup>:

<sup>1</sup> Բ. Բ. Պիոտրովսկի, Իսկական արքաներ (VIII-VI ա. թ. ա. պատմություններ), Լենինգրադ, 1962, էջ 54.

<sup>2</sup> Բ. Բ. Պիոտրովսկի, Վանական արքաներ (VIII-VI ա. թ. ա. պատմություններ), Լենինգրադ, 1962, էջ 54.

Քննարկվող արձանիկները նույնպես ձուլված են մոմե կաղապարներում և ամրացվում էին կաթսաների ուսերին: Ուրարտուի տարածքում գտնված կաթսաները զարդարող թուչունների արձանիկները հայտնի են Ալիշարի դամբարանից, Վանից: Դրանք պահպում են Պոլսի, Էրմիտաժի, Բեռլինի, Փարիզի տարբեր թանգարաններում:

Այս կաթսաների աշխարհագրությունը բավական լայն տարածում է ունեցել հասնելով Փոքր Ասիա, Հունաստան անգամ իտալիա:

Չորրորդ տիպին են վերաբերում նման ձեւի կաթսաները, որոնց շուրթերը զարդարող կենդանիների գլխաքանդակները կիսակլոր խողովակներով ամրացված են անոթների ուսերին: Ամրացման այսպիսի եղանակը տպավորություն է ստեղծում, թե կենդանիները՝ հիմնականում առյուծները, զգերը ձգած նայում են կաթսաների մեջ: Ըստ որում դրանց թիվը երբեմն հասնում է վեցի: Նման կաթսայի բռնակ, որը ավարտվում է երախը բաց առյուծի գլխով, հայտնի է Կարմիր բլուրից: Նրա վրա գրված է կարճ արձանագրություն՝ «Արգիշտի արքա, որդի Սարդուրի»:

Այս տիպի կաթսաները հաճախակի հանդիպում են Միջերկրականում՝ նոդոս և Սամսոն կղզիներում, Աթենքում, ինչպես նաև Իտալիայի էտրուսկյան դամբարաններում: Լայն տարածումը վկայում է այն մասին, որ Ուրարտուի մշակութային կապերը Միջերկրականի հետ ունեցել է երկարամյա ավանդություններ, որի հետեւանքով արվեստի մեջ տարածվում են ընդհանուր տարբեր, անգամ ընդօրինակում և նմանեցում:

Դույներ: Ուրարտական մետաղյա սպասքի մեջ առանձնակի տեղ են գրավում դույլերը, որոնք իրենց ձեռվ բաժանվում են երկու տիպի:

Առաջին տիպը մեծ դույլերն են, որոնք առանձնակի նշանակություն ունեն: Այն կայանում է ոչ թե կիրառական նշանակության կամ գեղարվեստական ձեւավորման մեջ, այլ նշանավորվում են իրենց ծիսական բնույթով: Դրա վկայությունը պարզորեն նկատվում է ուրարտական որմաննկարչական և գրաֆիկական արվեստում: Այսպես, էրեբունիի և Ալթին թեփեի որմանակարչության մեջ հաճախակի են այն տեսարանները, ուր աստավածները և տարբեր իշխանավորներ ձեռքերին կրում են փոքրիկ դույլեր: Նման դույլեր, նվիրատվական թիթեղների պատկերներում հաճախակի են հանդիպում, հատկապես աստվածությունների շարք - տեսարաններում: Առուբանի աստվածությունները նույնպես կրում են նման դույլեր:

Հնագիտական գտածոների մեջ նման դույլերը քիչ են հայտնաբերվել: Վերջին տարիներին մի քանի նման բրոնզե, արծաթե դույլեր գտնվել են Ուրարտուի կենտրոնական շրջաններում և պահպում են աշխարհի տարբեր

<sup>1</sup> Բ. Բ. Պիոտրովսկի, Կամրի Բլոր, Լենինգրադ, 1970, էջ 64-65.

թանգարաններում (Լես Արքսի, Վանի թանգարան, Մյուլիսեն, Տոկիո և այլն): Դրանք հայտնի են նաև Երևանի ուրարտական դամբարանից և Կարմիր բլուրից: Գտածոները պատրաստված են բարակ թիթեղից և ունեն կլորավուն հատակ, լայն, կենտրոնում փոքր-ինչ նեղացող իրան, ուղիղ շուրթ (բարձրությունը 12 սմ): Որոշ դույլերի շուրթերի տակով անցնում են մեկ կամ երկու ուռուցիկ նախշագծեր: Նման դույլերի շրթեղբերին ամրացված են օղակներ, որոնց միջոցով անցնում են լարից պատրաստված կիսակլոր շարժական բռնակներ<sup>1</sup>: Այս դույլերի թվագրության և հատկապես հանդես գալու ժամանակը ճշտելու համար կարեոր նշանակություն ունեն շվեյցարական և Լես Արքսի թանգարաններում պահպող նմուշները: Դրանցից մեկի վրա պահպանվել է հշպուհնիք և ինուշպուայի անունները, իսկ մյուսի՝ միայն հշպուհնիք: Արձանագրությունները վկայում են, որ նման դույլերը օգտագործվել են ուրարտական պետության կազմավորման սկզբում, միգուցե ավելի վաղ, ցեղային միությունների կազմավորման ժամանակներից: Ինչ վերաբերում է ինուշպուային, որի անունը հիշատակվում է նաև այլ արձանագրություններում, ապա նա հանդիսանում է Մեսուայի որդին և հշպուհնիքի թոռը և ըստ երևույթին Մենուայից հետո կարճ ժամանակով զբաղեցրել է ուրարտական գահը: Արգիշտի առաջինը ժառանգելով գահը, բնականաբար, հետագայում հիշատակում է ոչ թե եղբոր, այլ հոր անունը իր արձանագրություններում: Դույլերի մեջ աչքի է ընկնում արծաթե, ոսկով գոտեզարդված գտածոն: Դույլիկի բարձրությունը 10 սմ է, հատակի տրամադիմը, որը քիչ ավելի լայն է շրթագծից՝ 10,8 սմ է: Դույլի կողերը քիչ գոտավոր են: Դույլն այժմ պահպում է Լեզ Արքսում, թվագրվում է մ.թ.ա. IX դարի վերջով: Այն շեշտված ու քիչ դեպի դուրս ճկված շրթին, իրար դիմաց, ամրացված են երկու՝ հոծ լարից պատրաստված կիսաօղակներ, որոնց միջով անցնում են կանթին ծայրերը: Դրանք ավարտվում են օծի քանդակագրդ գլուխներով, որոնք հպված են կանթի և իրանին: Կանթը պատրաստված է հոծ արծաթե լարից: Դրա քանդակագրդ, օժագլուխ ծայրերը ոսկեպատ են: Դույլի շուրթերից քիչ վար անցնում է ուռուցիկ մի լարագոտի, որի տակ տեղադրված է շուրջ 4 սմ լայնությամբ զարդագոտի: Զարդագոտու վրա դրվագված են վերեւում ճկածիր, իսկ ներքեւում՝ ուղիղ շրջանակի մեջ առնված կենաց ծառեր: Կենաց ծառի երկու կողմերում կանգնած են աջ ձեռքով պտուղ, իսկ ձախով՝ նկարագրվածին նմանվող դույլիկ բռնած երկու աստվածություններ: Այս գոտեզարդում հորինվածքը կրկնվում է տասներկու անգամ, ամբողջ պարագծով: Մառերի մոտ պատկերված բոլոր ոգիներն ունեն եղջուրակիր, կի-

սակլոր, գնդիկներով ավարտվող գլխարկներ: Հագուստները, սակայն, տարրեր են. եթե մի ծառի մոտ կանգնած աստվածություններն ունեն երկար թիկնոցներ ու կարճ, մինչեւ ծունկը հասնող զգեստ, ապա հարևան ծառի թիկնոցները ու կարճ, մինչեւ ծունկը հասնող զգեստն ավելի երկար է ու հասնում է մինչեւ ոտնամատները: Այս մանրամասնությամբ խախտված է գոտեզարդի պատկերի միամբերի փոխադարձ սիմետրիան:

Եվրոպական հավաքածուներում պահպող դույլերի մեծ մասի հայտնաբերման վայրը հայտնի չէ: Սակայն, իրենց բացառիկ լավ պահպանված լինելու հանգամանքը վկայում է, որ դրանք դրված են եղել ոչ խոնավ վայրում: Նման տեղ կարող էր լինել ժայռափոր դամբարանը կամ գանձատուրում: Այս մասին, որ դամբարաններում դրվել են ծիսական դույլեր, վկայում են նման բրոնզե կաթսայիկների գյուտերը երեանի ու եղեգնաձորի բիայնական դամբարաններում: Իսկ այն, որ դրանք պահպել են գանձատներում, վկայում է Արևմտյան Հայաստանում հայտնաբերված արծաթե դույլերից մեկի վրա եղած արձանագրությունը «Իշպուհնիի գանձատուն»:

Երկրորդ տիպն են վերաբերում դեպի վեր լայնացող իրաններ ունեցող դույլերը: Սրանց վերին մասում կան ոչ մեծ օղակներ, որի միջով անցնում է բրոնզե լարից պատրաստված բռնակը: Մի այդպիսի դույլ գտնվել է Կարմիր բլուրի պեղումներից, նրա տրամագծորեն հակառակ ուսերին ամրացված է, ինչպես երկրորդ տիպի կաթսաների վրա, բրոնզե թռչնաձև թիթեղ, իսկ նրանց վրա՝ երկու ցուլի քանդակ գլուխները: Ինչպես մյուս կողերը զարդարող ցլի գլուխները ձուլված են մոմե կաղապարներում և ունեն նույն պատկերագրական առանձնահատկությունները: Մեկ այլ, փոքր ինչ ավելի մեծ նման դույլ պահպում է Տոկիոյի Արևելյան արվեստի թանգարանում: Այս, ի տարբերություն Կարմիր բլուրի դույլի, զարդարված է երեք ցուլերի գլուխներով:

Սափորներ: Ուրարտական մետաղյա սպասքի լավագույն նյութերի թվին են պատկանում անկանթ և մեկկանթանի բրոնզե և արծաթյա սարքին կողմից ոչ խոր ակոս ունեցող բռնակը շրթունքից աղեղնաձև պատարաց ձևերի կատարելագործմամբ հանդիսանում են ուրարտական գեղարվեստական մետաղի լավագույն նմուշներից:

Մեկկանթանի սափորներն ունեն գնդաձև իրան, նեղ հատակ և կարճ, փողաձև վիզ, որը ավարտվում է կլորավուն շուրթով: Կտրվածքում ճվածե, արտաքին կողմից ոչ խոր ակոս ունեցող բռնակը շրթունքից աղեղնաձև պատարաց ձևերի կողմից ոչ խոր ակոս ունեցող բռնակը շրթունքից աղեղնաձև պատարաց ձևերի կողմից է սափորի ուսերին: Նման արծաթե և բրոնզե սափորներ հայտնի են Կարմիր բլուրից: Մի քանի նման բրոնզե և մեկ արծաթե

<sup>1</sup> С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян. А. Г. Канециян, Биайнская гробница в Ереване, Ереван 1991, рис.29.

<sup>1</sup> Յիշ Հայաստանի Ռուսին (մ.թ.ա. III հազարամյակ - մ.թ. XVI դար), Երևան, 2007, էջ 177:

սափորներ գտնվել են Արևմտյան Հայաստանում և պահպում են Մյունիստի, Մայնցի, Շվեյցարիայի և Լեզ Ասքի թանգարաններում:

Անկանի սափորները ներկայացված են Ալթին թեփեկո գտնված երեք խոշոր (բարձրությունը 32-37 սմ, տրամագիծը 34-37 սմ) գնդաձեւ իրան ունեցող արծաթե և բրոնզե անոթներով: Դրանց ուսերին, պատրաստելուց հետո, շաղափված են երեքական անցքեր: Այս անոթները (որոնց մեջ գտնվել են աճյուններ) որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն գեղարվեստական տեսակետից: Վերլուծությունը պարզորեն վկայում է, որ դրանք հատուկ չեն պատրաստվել իրեք աճյունասափորներ, այլ հանդիսացել են կենցաղային անոթներ, որոնց մեջ հետագայում թաղել են իրենց տերերին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Գեղհովտի համալիրը փլատակներում հայտնաբերված մետաղե վերնամասը: Այն ունի ձագարաձեւ կառուցվածք պատրաստված է բրոնզի բավական հաստ թիթեղից և ամենայն հավանականությամբ, բրոնզե սափորի երկարաձիկ, փքված իրանի վերին շարունակությունն է կազմել: Նման սափորները հաճախ օժտված են լինում նաև շուրթից դեպի իրանի ուռուցիկ մասն իջնող, տափակ, բայց զանգվածեղ կանթով: Բարերախտաբար պահպանվել է սափորի շուրթին փորագրված հիերոգլիֆ նշանը: Այն ներկայացված է՝ լայն բացված մատներով զույգ ձեռքերի դաստակների, դրանց վերնամասում տեղադրված ձվածիր շրջագծի և վերջինիս միջնամասում վերից վար իջնող զույգ զուգահեռ գծերի փորագիր պատկեր: Բրոնզից, արծաթից և երկաթից պատրաստված սափորները վանտոսպյան հուշարձաններում հանդիպում են ոչ հաճախ: Առայսօր հայտնի բոլոր օրինակների թիվը չի անցնում երկու տասնյակից: Նման սափորներ (կամ դրանց մնացորդները) հայտնաբերվել են Վանից (Թոփրակ կալե), Թեյշեբախնիից, Երևանի «Ավտոագրեգատ» գործարանի դամբարանից: Արևմտյան Հայաստանից գտնված մի քանի պատահական նմուշներ ներկայումս պահպում են Մայնցի և Մյունիստի թանգարանում:

Գեղհովտյան գտածոյին առավել մոտ է Թեյշեբախնիից հայտնաբերված մի կանթանի արծաթե սափորը: Բանն այն է, որ վերջինս շուրթից քիչ ցած դարձյալ փորագիր հիերոգլիֆ նշաններ է կրում: Հաստ որում երեք առանձին նշանագրերից կազմված այդ փորագրությունը գրեթե նույնությամբ կրկնվում է Թեյշեբախնիից հայտնաբերված մի քրեղանի վրայի գիրը: Մասնագետների կարծիքով և՝ քրեղանը, և՝ արծաթե սափորը վերաբերվում են մ.թ.ա. VII դարին, ինչն էլ թույլ է տալիս մոտավորապես նույն ժամանակաշրջանին վերագրել նաև Գեղահովտից հայտնաբերված օրինակները: Բաց է մնում միայն Գեղահովտի բրոնզե սափորի վրա արված հիերոգլիֆ նշանի իմաստային ծանրաբեռնվածության հարցը: Ինքը՝ նշանը, մոտավոր զուգահեռներ ունի ավելի վաղ շրջանի ինչպես եղիպտական,

այնպես էլ խեթական պատկերներում ու նշանագրերում: Եղիպտական որմնանկարներում վեր պարզված ափերի մեջ արևի ձվածեւ սկավառակն է պահում օդի Շու աստվածուհին: Մի այլ տեսարանում ձվածեւ սկավառակը Օսիրիսի խորհրդանիշը հանդիսացող և «ջեղ» պատվանդանի միջից ելնող «անկն» նշանի ձեռքերում է: Պատկերը, ըստ Էլության նույնացվում է ծագող արևի գաղափարի հետ: Եղիպտական որմնանկարչության մեջ նման պատկերում ունի նաև Աթոն աստվածը՝ արևի կենդանի սկավառակը: Այն ներկայացվում է արևից սկիզբ առնող և մարդկային ձեռքերի վերածվող ճառագայթների տեսքով: Գլխավերևում (նաև անմիջապես գլխի վրա) վեր պարզած զույգ ձեռքերի պատկերավորում ունի նաև եղիպտացիների կապատկանական աստվածությունը: Այն ինչպես աստվածների, այնպես և մարդկանց երկրորդ էլության (երկրորդ եսի) դրսեւորումն է և կարող է ապրել ինչպես քառոսում, այնպես էլ անդրաշխարհում (խտոնոսում): Հնարավորություն ունի լքել տիրոջ մարմինը և կրկին ետ վերադառնալ ու վերաբնակվել նրա մեջ: Մարդու դաստակի կամ ափի փորագիր պատկերները կամ բրոնզե մանրակերտները, որպես իմաստային որոշակի ծանրաբեռնվածություն ունեցող խորհրդանշան, հանդիպում են նաև մ.թ.ա. II հազարամյակի կեսի էգեյան (Կրետե կղզի՝ Աստրակուս հնավայր), խեթական (Կարա հույուկ) և Հյուսիսկովկասյան (Թլի, Կոբան) հնագիտական համալիրներում: Այս առումով առավել տեղեկատվական են Պաղեստինի Հազոր բնակավայրում պեղված և քանանացիներին վերագրվող բրոնզեդարյան սրբարանի որոշ մանրամասները: Կիսաշրջանաձեւ հատակագիծ ունեցող սրբարանի կենտրոնում տեղադրված զոհասեղանի հանդիպակաց հատվածում, ուղղահայց դիրքով տնկված սալի վրա փորագրված են արմունկներից կտրված զույգ ձեռքեր և դրանց վերնամասում՝ շրջանաձեւ պատկեր, հավանաբար արև: Խորհրդանշական պատկեր, որ դարձյալ, ամենայն հավանականությամբ պաշտամունքի հետ առնչվող որոշակի իմաստային ծանրաբեռնվածությամբ պատահած է կրում: Ինչ վերաբերվում է գեղահովտյան նշանագրի վերին՝ ձվածիր պատկեր ներկայացնող հատվածին, ապա այն ես իր զուգահեռներն ունի խեթական աղբյուրներում: Մասնավորապես այդպիսի նշաններ են կրում Ցաղըլլը Քայայի մ.թ.ա. II հազարամյակի կեսի բարձրաքանդակները: Խեթական (լուվիական) տեքստերում վերջիններս հանդիսանում են «աստված» հասկացության գաղափարագիրը, և տեղադրում են աստվածությունների անվանումների վերնամասում:

Հետաքրքիր է, որ վերը նկարագրված անկանթ, մեկկանթանի սափորները, ցուլերի գլուխներով զարդարված կաթսաները և շատ այլ մետաղերը,

<sup>1</sup> Ա. Ս. Փիլիպոսյան, Ռ. Ա. Մկրտչյան, Գեղահովտի Կանտոսպյան (Ուրարտական) քարայր-դամբարանը, Երևան, 2001, էջ 30-31:

սպասքի ձևերն էտալոն են հանդիսացել կավագործ վարպետների համար, որոնք ընդօրինակել են մետաղյա իրերի ձևերը կավանոթներ պատրաստելու ժամանակ:

**Թասեր:** Ուրարտական մետաղյա սպասքի մեջ զգալի տեղ են գրավում թասերը և փիալանման անոթները, որոնք հայտնի են մի քանի հարյուր օրինակով: Միայն Կարմիր բլուրի պեղումների ընթացքում գտնվել է մոտ 150 օրինակ: Հարյուրի հասնող նմուշներ գտնվել են Թոփրակ կալեի, Հայկաբերդի, Կայալի դերեի, Ալթին թեփեի, Իգդիրի և այլ հուշարձանների պեղումներից: Մեծ թվով նման թասեր գտնվել են պատահական պեղումներից և պահպում են Վանի, Աղանայի, Գազիայնթափի, Բեռլինի, Մյունիսի, Մայնցի, Լեզ Արքսի և աշխարհի այլ թանգարաններում: Շատ թասերի հատակին ներսի կողմից կան հշպուխնի, Մենուայի, Արգիշտի 1-ինի, Սարդուրի 2-րդի, Ռուսա 1-ինի արձանագրությունները<sup>1</sup>: Որոշ թասերի արձանագրությունների հետ կան հիերոգլիֆ նշաններ: Հանդիպում են թոչունի և շեղանկյան նշաններ, ամրոցի, աշտարակի, ծառի, առյուծների գլուխներ և այլ պատկերներ:

Կարմիր բլուրում պեղվածներից մոտ 90 գտնվել են միասին և պահպանել էին իրենց նախնական ոսկեզոծ փայլը ու մաքուր «ձայնը»: Այս թասերը պատրաստված էին բարձրորակ բրոնզից, անագի զգալի խառնուրդով 10% և ունեին, ըստ երեսությին, արծաթի որոշակի պարունակություն: Այս հանգամանքը բնորոշ է «եկեղեցական բրոնզին», որի շնորհիվ նրա զանգերը յուրաքանչյուրի համար ուրույն հնչեղություն է արձակում: Նույն հատկությունը ունեին նաև նշված թասերը: Թասերը իրենց ձևերով բաժանվում են երեք տիպի: Բոլորն ունեն 12-20 սմ տրամագիծ և 4-10 սմ բարձրություն: Կրկնությունից խուսափելու նպատակով ասենք, որ վերը նշված բոլոր թանգարաններում կան նման թասեր:

Առաջին տիպին են վերաբերում լայն, կլորավուն հատակ և սահուն բարձրացող ուղղիղ եղբեր ունեցող թասերը, որոնք զուրկ են որևէ զարդից (բացի ներսի հիերոգլիֆներից): Այս տիպի անոթների մեջ եղակի գյուտ է հանդիսանում իգդիրում գտնված թասը, որի հատակին արտաքին կողմից պահպանվել են երեք կարճ ոտքերի նշան - հետքեր: Անոթը իր ձևով հիշեցնում է լավ հայտնի եռուտանի խեցեղեն անոթներին:

Երկրորդ տիպին են վերաբերում շքեղ թասերը, որոնց եղբերը զարդարված են ամբողջ պարանոցով խոշոր գդալաձև ելուստներով (ներսից դուրս են ճկված): Որոշ օրինակներ ունեն օղակաձև հատակ: Հանդիպում են նաև անոթներ, որոնց հատակը արտաքին կողմից ունի կլորավուն

սեղմվածք, իսկ ներսից կլորավուն ելուստ: Այս տիպին պայմանականորեն կարելի է վերագրել երեանի բիայնական դամբարանի թասը, որի հատակը և իրանը զարդարված են երեք շարք գդալաձև ելուստներով, որոնք բաժանված են իրար միացած կիսակլոր գծիկներով:

Երրորդ տիպին են վերաբերում նման թասերը, որոնց եզրերը զարդարված են ոչ թե գդալաձև, այլ կլորավուն ելուստներով: Դրանցից մեկի վրա պահպանվել է հշպուխնի և Մենուայի արձանագրությունը<sup>1</sup>:

Ավարտելով ուրարտական սպասքի ներկայացումը, հարկ է նշել, որ դրանք չեն սահմանափակվում նկարագրվածով: Առանձին օրինակներով հանդիպում են բաժակաձև անոթներ, ափսեներ, երկանթանի գավաթներ և այլն, որոնք բնականաբար չեն կարող դասակարգվել, բայց վկայում են սպասքի բազմաձեռւթյան մասին: Հատկապես հետքքրքիր է Լոռի բերդի 56-րդ դամբարանի գեղարվեստական թանկարժեք իրերի մեջ ամենաարժեքավորը՝ արծաթե գավաթը: Այն ձվաձև է, լայն բացվող, հարթ ուսով քավորը՝ արծաթե գավաթը: Այն ձվաձև է, լայն բացվող, հարթ ուսով քավորը՝ արծաթե գավաթը: Այն լայնությամբ, որը բաժանվում է երեք մասի: Հագուստով, մեջքին գոտի, կառապանը կանգնած է հակառակ դիրքով: Մարտիկը աջ ձեռքով բարձրացրել է փոքր, կլոր վահանը, ձախով բռնել գեպի արմավենին ուղղված նիզակը: Զիու գլխին առաջ եկած փետրաձև հարդարանք կա: Երկած նիզակը: Զիու գլխին առաջ եկած փետրաձև հարդարանք նեղ բրորդ և երրորդ մասում երկու և մեկ հեծյալներ են հանդերձավորված նեղ տարատով, գոտիով: Նրանք աջ ձեռքով մտրակում են ձիերին, ձախով ձգում են երասանակները: Բոլոր մարդկի կրում են ականջակալով, վզկալով. սրածայր գագաթները հետ թեքված գլխարկներ կամ սաղավարտներ, բացի զույգ հեծյալներից երկրորդի, որի գլխարկը սրածայր է: Կառապանն ու հեծյալները՝ առաջամասում կապերով, ճտքավոր, սրածայր կոշիկներով են: Ձիերի վզին մետաղյա գոտիներ են, իսկ իրանին՝ զարդարուն ծածկոցներ, որոնք ավելի շքեղ են առաջամասում:

Այս զարդագոտին համեմատելով ուրարտական և ասորեստանյան քանդակարվեստի նմուշների հետ՝ երեան են բերվում և՝ նմանություններ, տարրերություններ: Մեկ ձեռքով ձիերի գավակին հարվածող ձիավորներ կան նաև Արին բերդի ուրարտական դամբարանի բրոնզե գոտու որսի կան նաև Արին բերդի ուրարտական դամբարանի բրոնզե գոտու որսի կողմանականում են հին արեելյան պատկերագրությանը: Ճտքավոր կողմապատասխանում են հին արեելյան պատկերագրությանը:

<sup>1</sup> Uesula Seidl, Bronzekunst Urartus, Mainz am Rhein 2004, p.45-47, abb.18-23.

<sup>1</sup> Uesula Seidl, Bronzekunst Urartus, Mainz am Rhein 2004, p.55, abb.18-19.

շիկները նման են Կարմիր բլուրի կոչկածե անօթներին: Թագավորի զգեստը նույնպես ուրարտական է: Զիերի պատկերները լիովին տարբերվում են ուրարտական կամ ասորեստանյան նրբիրան և երկարավիզ, կապված պոչերով նժույգներից: Մարդկանց սրածայր և թեքված սաղավարտների վաղագույն ուրարտական նմանակը, որն այժմ պահպում է Մայնցի թանգարանում, կրում է իշպուխնիի արձանագրությունը և թվագրվում է մ.թ.ա. IX դարի վերջին քառորդով: Վերոհիշյալ արմավենիները բնորոշ չեն ուրարտական արվեստին. դրանք տարածված են եգիպտա-ասորա-բաբելոնական միջավայրում:

Զարդագոտին առաջին հայացքից ընկալվում է որպես արմավենիների միջավայրում կատարվող՝ հին արևելյան թագավորական որսի տեսարան, որտեղ որսի կենդանին չի պատկերված: Ակնառու է նաև հեծյալների անգենությունը: Մյուս կողմից պատկերագոտին կարող է արտահայտել նաև երթ կամ թագավորի փախուստ՝ մատակ ձիուն լծված մարտակառքով:

Արծաթե գավաթն իր ձվածեռությամբ, շուրթի լայն բացվածքով, մակերեսի ուռուցիկ գնդիկներով (պունսոններով) մոտենում է ուրարտական ձևերին: Այն պատրաստված է արծաթե ամբողջական թիթեղից (կարը չի երևում), գնդիկները ու պատկերագրդ գոտու ուռուցիկ մասերը կատարվել են հակառակ կողմից դրվագման եղանակով, իսկ հիմնական, գծային փորագրությունները՝ կատարվել են երեսից: Այսպիսով, գավաթի զարդագոտին իր թեմատիկայով և պատկերագրությամբ նմանվում է հին արևելյանին: Այն կատարված է կոպիտ, անվարժ ձեռքերով, հնարավոր է, որ ընդօրինակված լինեն մի այլ պատկերից, ոչ կատարյալ ու վարժ ձևով:

Այսպիսով քննարկվող սպասքի նմուշները պատրաստվել են ավանդական մետաղագործական հնարքներով և հետագայում լայն կիրառություն ունեցել հայկական արհեստագործության մեջ: